ՀՐԱՎԵՐ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նշված ապրանքները: Սույն հրավերի ծածկագիր է հանդիսանում «Գ7ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2»: Գնման առարկա է հանդիսանում սննդի ծանրոցների ձեռքբերումը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գյումրի, Ալեք Մանուկյան 4 «Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ հասցեով մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը, ժամը 15:00-ը:

Հայտերը կբացվեն «Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի շենքում, 2015թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 15:00 -ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը (օրինակելի ձևերը կցվում են):

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

. «Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

gyumri7@mail.schools.am

Հեռ.091471245/093471245

**Պատվիրատու՝ «Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ**

Հավելված 2
<< ԳՏՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2>> ծածկագրով
շրջանակային ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված << ԳՏՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2>> ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, --------------------------------------------------ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |

*3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

--------------------------------------------------    --------------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)    (ստորագրությունը)

Կ. Տ.

«--------» --------------- 20----թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1
<< Գ7ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2>> ծածկագրով
շրջանակային ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

----------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

--------------------------------------------------------------------------------ի կողմից N ---------------------------------- ծածկագրով

Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի ------------------------------------------------------------ չափաբաժնին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

--------------------------------------------------------------------------------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

--------------------------------------------------------------------------------:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--------------------------------------------------------------------------------  --------------------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)  (ստորագրությունը)

Կ. Տ.

«--------» ------------------- 20----թ.

(ամսաթիվը, ամիսը)

<< Գ7ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2>> ծածկագրով

*շրջանակային ընթացակարգի հրավերի*

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ7ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2 -01

ք. Գյումրի << >> << >> 20 թ.

«Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ի դեմս տնօրեն Գագիկ Կարապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<_________________>> -ն, ի դեմս տնօրեն _______________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդի ծանրոցները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին նրա կողմից նշված հասցեով :

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին է մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ________________ (__________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա փոփոխված հավելված 3-ով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդին համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ Կողմերի միջև համաձայնագրի կնքման հիման վրա: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.2 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ* | |
| ք. Գյումրի, Ալեք Մանուկյան | |
| ՀՎՀՀ 05529326 | |
| Առէկսիմբանկ | |
| Հ/Հ 2380018379010100 | |
| Տնօրեն՝ Գ. Կարապետյան | |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1

N Գ7ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2 -01
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կարիքների համար 2015 թվականի ընթացքում գնման ենթակա սննդի ծանրոցների

## 1. Գնման առարկայի բնութագիրը

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Չափաբաժնի միավորի պարունակության միջին օրական նվազագույն չափաքանակը ըստ սննդամթերքի տեսակների | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Անվանումը | գրամ | հատ |
| 1 | Սննդի ծանրոց | հատ | Բուտերբրոդի հաց | 100 | |
| | | | երշիկ | 20 | |
| | | | նրբերշիկ | 20 | |
| | | | պանիր | 10 | |
| | | | Խաշած ձու | | 1 |
| | | | Պանրիկ | 8 | |
| | | | Թթվասեր | 20 | |
| | | | յոգուրտ | 20 | |
| | | | Հյութ | 80 | |
| | | | Խնձոր | 200 | |
| | | | Կերս | 10 | |
| | | | Թխվածքաբլիթ /պրյանիկ/ | 90 | |
| | | | Թխվածքաբլիթ /պեչենի/ | 30 | |
| | | | Վաֆլի | 11 | |
| | | | Հալվա | 6 | |
| | | | Թռչնի կաթ | 13 | |
| | | | Կարամել | 6 | |
| | | | Շոկոլադ | 6 | |
| | | | Գդալ | | 0,4 |
| | | | Անձեռոցիկ | | 1 |

2. Սննդի ծանրոցներում պարունակվող սննդամթերքի և սննդի օգտագործման հետ կապված պարագաների բնութագիրը

| Սննդի ծանրոցներում սննդամտերքը և սննդի օգտագործման հետ կապված պարագաները | Բնութագիրը |
|---|---|
| Բուտերբրոդի հաց | Ցորենի ալյուրից թողարկված հատով, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման, պատրաստված բարձր տեսակի ալյուրից, ՅՍՏ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարագային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Պանիր | Պանիր կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50 %-ից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3,5-4,5 %: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) անիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Նրբերշիկ | Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից, ԳՕՍՏ 23670-79, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |

| | |
|---|---|
| Երշիկ | Երշիկներ , I տեսակների պատրաստված տավարի, ոչխարի, տավարի և խոզի մսերից, փաթեթավորումը՝ վակուումային, ԳՕՍՏ 16351-86: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ ՍանՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի,տեղական արտադրության կամ համարժեքը |
| Բուլկի /չամիչով/ | Կաքնահունց, շաքարահունց, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ ՍանՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Բուլկի /ջեմով/ | Կաքնահունց, շաքարահունց, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ ՍանՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Մանդարին | Մանդարին թարմ, I պտղաբանական խմբի, դեղին կեղևով և պտղամսով, ԳՕՍՏ 4428-82, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված ,Թարմ պտուղ-բանջարեղենի տեխ. կանոնակարգիեն ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| Խնձոր | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված ,Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգիեն ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| Շոկոլադ | Պինդ, համասեռ, արտաքին մակերեսը փայլուն, ծակոտկեն շոկոլադի դեպքում՝ խոռոչավոր, ծնը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, մանրեցման աստիճանը՝ 92%-ից ոչ պակաս, միջուկի զանգվածային մասը՝ 20%-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 6534-89 :Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ ՍանՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, տեղական արտադրության կամ համարժեքը |

| | |
|---|---|
| Թխվածքաբլիթ | Կաթնահունց, շաքարահունց, երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3-10%, շաքարի զանգվածային պարունակությունը ՝ 20-27%, յուղայնությունը՝ 3-30%, ԳՕՍՏ24901-89: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Յոգուրտ | Յոգուրտ (Բիո) կենդանական պատրաստված կաթնամթերքից,մրգային առանց կոնսերվանտների |
| Անձեռոցիկ | Անձեռոցիկ սեղանի տեղական արտադրության, տուփերով, |
| Կեքս | Կաթնահունց, շաքարահունց, երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3-10%, շաքարի զանգվածային պարունակությունը ՝ 20-27%, յուղայնությունը՝ 3-30%, ԳՕՍՏ24901-89: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Թթվասեր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 T, անվտանգությունը՝N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Թռչնի կաթ | Ըստ ԳՕՍՏ-ի, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, և ՙՙՍննդամթերքի անվտանգության մասինՙՙ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Վաֆլի | Միջուկով և առանց միջուկի չափածրարված և առանց, ԳՕՍՏ14031-68 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |

| | |
|---|---|
| Ջյուր | Պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ Ճստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավել և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս,փաթեթավորումը՝ շշալցված՝ ապակե և մետաղյա լաքապատված, ինչպես նաև ստվարաթղթե սպառողական 0,25 լիտրանոց տարաներով, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Հավկիթ | 1-ին կարգի , Ձու սեղանի կամ դիետիկ, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀՍՏ 182 99: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| Կարամել | Ծարմ, մրգային, տեղական արտադրության 2 տեսակի՝ նաբաթով և միջուկով,<br>խոնավությունը՝ 3,0 %-ից ոչ ավելի, թթվայնությունը՝ -3-26:<br>Փաթեթավորված և առանց, ԳՕՍՏ 6477-88 ,Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003<br>(ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի<br>և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, տեղական<br>արտադրության կամ համարժեք: |
| Հալվա | Հալվա արախիսով 30գ,կալորիականությունը 553,4կկալ100գ |
| Պանրիկ | Կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50 %-ից ոչ պակաս, 40գ ,<br>ըստ:Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003<br>(ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի<br>և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ԳՕՍՏի |
| Գդալ | 1 անգամյա օգտագործման |

3. Սննդի ծանրոցների պարունակությունը տարբերակները ըստ շաբաթվա օրերի

| Գնման առարկայի չափաբաժնի անվանումը | Պարունակությունը |
|---|---|
| Տարբերակ 1 Երկուշաբթի | Մեկ փաթեթի պարունակությունը՝<br>1.Բուտերբրոդ երշիկով 1 հատ – բուտերբրոդը պետք է պատրաստված լինի 1 հատ բուտերբրոդների համար նախատեսված հացից 100գ և առնվազն 50գ երշիկից: Բուտերբրոդի ընդհանուր քաշը առնվազն 150գ, փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:<br>2. Հավկիթ 1 հատ – պատրաստված շոգեխաշման եղանակով առնվազն 50գ<br>3. կեքս – 1-3 հատ կեքս առնվազն 40գ<br>4. Թխվածքաբլիթներ /պրյանիկ/ - 4 հատ պրյանիկ առնվազն 150 գ.:<br>5.Խնձոր 2-3 հատ – միջին չափի առնվազն 200գ.:<br>6.Թթվասեր 1 հատ – չափածրարված առնվազն 100գ. Սննդի համար նախատեսված տարայով:<br>7.Գդալ 1 հատ- մեկ անգամյա օգտագործման նախատեսված սննդի համար:<br>8. Անձեռոցիկ 1 հատ- թղթե երկշերտ կամ եռաշերտ: |
| Տարբերակ 2 Երեքշաբթի | Մեկ փաթեթի պարունակությունը՝<br>1.Բուտերբրոդ նրբերշիկով 1 հատ – – բուտերբրոդը պետք է պատրաստված լինի 1 հատ բուտերբրոդների համար նախատեսված հացից 100գ և առնվազն 50գ նրբերշիկից պատրաստված շոգեխաշման եղանակով: Բուտերբրոդի ընդհանուր քաշը առնվազն 150գ, փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:<br>2. Հավկիթ 1 հատ – պատրաստված շոգեխաշման եղանակով<br>3. Թխվածքաբլիթներ /պեչենի / - 2-4 հատ պեչենի առնվազն 50գ :<br>4. Թխվածքաբլիթներ / պրյանիկ/ - 3-5 հատ պրյանիկ առնվազն 150 գ<br>5.Խնձոր 2-3 հատ – միջին չափի առնվազն 200գ.:<br>6.Կարամել 4-6 հատ – առնվազն 30գ.<br>7.Հյութ 1 հատ- առնվազն 200մլ:<br>8. Անձեռոցիկ 1 հատ- թղթե երկշերտ կամ եռաշերտ: |
| Տարբերակ 3 Չորեքշաբթի | Մեկ փաթեթի պարունակությունը՝<br>1.Բուտերբրոդ երշիկով 1 հատ – բուտերբրոդը պետք է պատրաստված լինի 1 հատ բուտերբրոդների համար նախատեսված հացից 100գ և առնվազն 50գ. Երշիկից: Բուտերբրոդի ընդհանուր քաշը առնվազն 150գ, փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:<br>2. Հավկիթ 1 հատ – պատրաստված շոգեխաշման եղանակով<br>3. Թխվածքաբլիթներ /պեչենի/ - 2-4 հատ առնվազն 50գ<br>4.Խնձոր 2-3 հատ – միջին չափի առնվազն 200գ.:<br>5. Թռչնի կաթ 2-4 հատ առնվազն 29գ.:<br>6.Վաֆլի 2-3 հատ – առնվազն 18գ.:<br>7. Պանրիկ 1 հատ – չափածրարված առնվազն 40+-3գ սննդի համար նախատեսված տարայով:<br>8. Անձեռոցիկ 1 հատ- թղթե երկշերտ կամ եռաշերտ: |
| Տարբերակ 4 Հինգշաբթի | Մեկ փաթեթի պարունակությունը՝<br>1.Բուտերբրոդ նրբերշիկով 1 հատ – – բուտերբրոդը պետք է պատրաստված լինի 1 հատ բուտերբրոդների համար նախատեսված հացից 100գ և առնվազն 50գ նրբերշիկից պատրաստված շոգեխաշման եղանակով: Բուտերբրոդի ընդհանուր քաշը առնվազն 150գ, փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:<br>փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:<br>2. Հավկիթ 1 հատ – պատրաստված շոգեխաշման եղանակով<br>3. Թխվածքաբլիթներ /պեչենի / - 2-4 հատ պեչենի առնվազն 50գ |

| | |
|---|---|
| | 4 Հալվա 1-2 հատ առնվազն 30գ.:<br>5.Խնձոր 2-3 հատ – միջին չափի առնվազն 200գ.:<br>6.Շոկոլադապատ կոնֆետ 2-3 հատ – առնվազն 30գ.<br>7.Հյութ 1 հատ- առնվազն 200մլ:<br>8. Անձեռոցիկ 1 հատ- թղթե երկշերտ կամ եռաշերտ: |
| Տարբերակ 5<br>Ուրբաթ | Մեկ փաթեթի պարունակությունը՝<br>1.Բուտերբրոդ պանրով 1 հատ – բուտերբրոդը պետք է պատրաստված լինի 1 հատ բուտերբրոդների համար նախատեսված հացից 100գ և առնվազն 50գ. Պանրից: Բուտերբրոդի ընդհանուր քաշը առնվազն 150գ, փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:<br>2. Հավկիթ 1 հատ – պատրաստված շոգեխաշման եղանակով<br>3.Խնձոր 2-3 հատ – միջին չափի առնվազն 200գ.:<br>4. Թռչնի կաթ 4հատ առնվազն 38գ.:<br>5.Վաֆլի 3--5 հատ – առնվազն 36գ.<br>6 Թխվածքաբլիթներ /պրյանիկ/ 3-5հատ առնվազն 150գ:<br>7.Յոգուրտ 1 հատ – չափածրարված առնվազն 100գ. Սննդի համար նախատեսված տարայով:<br>8.Գդալ 1 հատ – մեկ անգամյա օգտագործման նախատեսված սննդի համար:<br>9 Անձեռոցիկ 1 հատ- թղթե երկշերտ կամ եռաշերտ: |

**Յուրաքանչյուր միավոր սննդի փաթեթ պետք է փաթեթավորված լինի առանձին սննդի համար նախատեսված տոպրակով:

***Սննդի փաթեթում ներառված ապրանքները պետք է փաթեթավորված լինեն առանձին՝ սննդի համար նախատեսված տոպրակներով կամ տարաներով, ընդ որում փաթեթներում առկա ապրանքատեսակները պետք է համապատասխանեն ապրանքնատեսակների տեխնիկական բնութագրերին[1]:

****Մատակարարումները պետք է իրականացվեն 2015 թ. Ընթացքում մատակարարի ուժերով և միջոցներով, սննդի համար նախատեսված մեքենայով, աշխատանքային օրերին, մինչև առավոտյան ժամը 9.30

ԳՆՈՐԴ                                                            ՎԱՃԱՌՈՂ

Հավելված 2

N ԳՊՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2 -01
ծածակագրով պայմանագրի

## Գնման ժամանակացույց

Հազ.դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափի ման միավորը | Հունվար | | Փետրվար | | մարտ | | Ապրիլ | | Մայիս | | Սեպտեմբեր | | հոկտեմբեր | | Նոյեմբեր | | Դեկտեմբեր | | Ընդամենը տարի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը |
| 1 | 2 | 3 | 4 | | | | | | 4 | | | | | | 4 | | | | | | 12 | 13 |
| 1 | Սննդի ծանրոցներ | հատ | | | | | | | | | | | | | | | | | | | 15640 | |

ԳՆՈՐԴ

____________________
/ստորագրությունը/

Կ Տ

ՎԱՃԱՌՈՂ

____________________
/ստորագրությունը/

Կ Տ

Հավելված 4
<<     >> <<      >> 201____ թ. կնքված
N ԳԴՀԴ-ԾՀԱՊՁԲ-15/2 -01 ծածկագրով պայմանագրի

Կատարող
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ ______________________
________________________
հվհհ ____________________

Պատվիրատու
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ______________________
________________________
հվհհ____________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<__________________>> 20    թ.

Պայմանագրի անվանումը՝ ________________________________________________
________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<__________________>> 20    թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Կատարողը՝ ի դեմս________________________________________________,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
____________________________
ստորագրություն
____________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
____________________________
ստորագրություն
____________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.